ConverseBank

ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտում տրամադրվող սուբսիդավորվող լիզինգ և վարկեր
Տեղեկատվական ամփոփագիր

Թարմացվել է 20.01.2023թ.

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի (այսուհետ՝ ԳՖԿ) հետ ունեցած համագործակցության պայմանագրերի շրջանակում ՀՀ գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին առաջարկում է ՀՀ դրամով ֆինանսավորում՝ հետևյալ պայմաններով.

1. ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների Լիզինգի աջակցության ծրագիր	
Նպատակ	Լիզինգը տրամադրվում է հետևյալ ոլորտներում օգտագործվող ագրոպարենային սարքավորումների ձեռք բերման նպատակով. 1. անասնաբուծություն, այդ թվում՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, ձկնաբուծություն, մեղվաբուծություն, արդյունագործական գազանաբուծություն խխունջաբուծություն, 2. բուսաբուծություն, այդ թվում՝ ջերմատնային տնտեսություն 3. սառնարանային տնտեսություն, այդ թվում՝ կաթի մթերման կայաններ և կաթ տեղափոխող իզոթերմիկ ցիստերներ 4. թարմ պտուղբանջարեղենի և հատիկաընդեղենի տեսակավորման, փաթեթավորման ու հատիկաընդեղենի զտման գործունեություն 5. սպանդանոցային տնտեսություն, շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներ, ինչպես նաև սպանդանոցային ծառայություն մատուցողի կոմից ձեռք բերվող մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցներ 6. ագրովերամշակող արդյունաբերություն 7. ագրոպարենային գործունեության այլ ոլորտներ 8. ավտոամբարձիչներ և հիմնական միջոց հաշվառվող հումքի և արտադրանքի պահման մետաղյա տարողություններ ու գինեգործության ոլորտում օգտագործվող կաղնեփայտե տարաներ
Լիզինգառու	ՀՀ գյուղատնտեսությունում տնտեսվարող ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, գյուղատնտեսական կոոպերատիվներ
Լիզինգի գումար	Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի **1,000.0 մլն ՀՀ դրամը**, բացառությամբ **Նպատակ** դաշտի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված գործունեության ոլորտների լիզինգառուների, որոնց կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի **200.0 մլն ՀՀ դրամը** (լիզինգի առարկայի արժեքը ներառում է լիզինգի առարկայի ձեռք բերման գինը, լիզինգի առարկայի ՀՀ ներմուծման հետ կապված այլ ծախսեր, մաքսազերծում, ավելացված արժեքի հարկ և այլն, այն դեպքում, երբ կառուցվածքը (կոնստրուկցիան) կազմում է լիզինգով ձեռք բերվող տեխնոլոգիական սարքավորման անբաժանելի մաս, ապա կառուցվածքը կարող է դիտարկվել որպես լիզինգի առարկա):
Տարեկան տոկոսադրույք	Լիզինգը տրամադրվում է. - *ՀՀ դրամով՝* տարեկան **մինչև 12%** փաստացի տոկոսադրույքով, որից սուբսիդավորում է **մինչև 10 տոկոսային կետը**, - *Արտարժույթով՝* տարեկան **մինչև 9%** փաստացի տոկոսադրույքով, որից սուբսիդավորում է **մինչև 6 տոկոսային կետը**, *իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների համար լիզինգի տոկոսադրույքը սուբսիդավորում է ամբողջությամբ, և լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմում է **0 տոկոս**:* ***Բանկի կողմից լիզինգի տրամադրման հետ կապված այլ վճարներ չեն սահմանվում*** *Տարեկան **փաստացի տոկոսադրույքը** ներառում է նաև լիզինգը ստանալու համար անհրաժեշտ այլ վճարները՝ գրավի գնահատման, գրավի իրավունքի գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման: Սուբսիդավորման տոկոսադրույքը չի ներառվում փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:*
Կանխավճար	Լիզինգի առարկայի ձեռք բերման գնի **20%**
Ժամկետ	**Մինչև 60 ամիս** *Լիզինգի մայր գումարի մարման համար կարող է սահմանվել արտոնյալ ժամանակահատված՝ լիզինգը տրամադրելու պահից առավելագույնը 3 ամիս: Բացի այդ, Բանկի կողմից կարող են սահմանվել լիզինգի*

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել Բանկի հետ:
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից

	հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս ժամկետով: Լիզինգի չսուբսիդավորվող տոկոսների վճարման պարտավորությունը առաջանում է տրամադրման պահից սկսած:
Այլ պայմաններ	1. Նույն լիզինգառուն Ծրագրից կարող է օգտվել մեկ անգամ: 2. Լիզինգի պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում լիզինգի առարկան ենթակա է պարտադիր ապահովագրման վնասվածքի և կորստյան ռիսկերից՝ Լիզինգառուների հաշվին: 3. Այն դեպքում, երբ ջերմատունը կառուցվում և մոնտաժվում է կապալառուի միջոցով՝ Բանկի, կապալառուի և շահառուի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա, ապա ամբողջական ջերմատունը (այդ թվում՝ հողամասը, որի վրա կառուցվում է ջերմատունը)՝ համալրված անհրաժեշտ սարքավորումներով, կարող է դիտարկվել որպես լիզինգի առարկա (բացառությամբ այն դեպքի, երբ ջերմատունը կառուցվում է ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 14-ի N1612-Լ որոշմամբ հաստատված «Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագրի» շրջանակներում): 4. Այն դեպքում, երբ սառնարանային կամ գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունը կառուցվում և մոնտաժվում է կապալառուի միջոցով՝ Բանկի, կապալառուի և շահառուի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա, ապա ամբողջական սառնարանային կամ գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունը (այդ թվում՝ հողամասը, որի վրա կառուցվում է սառնարանային կամ գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունը)՝ համալրված անհրաժեշտ սարքավորումներով, կարող է դիտարկվել որպես լիզինգի առարկա: 5. Այն դեպքում, երբ սպանդանոցը կառուցվում և մոնտաժվում է կապալառուի միջոցով՝ Բանկի, կապալառուի և շահառուի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա, ապա ամբողջական սպանդանոցը (այդ թվում՝ հողամասը, որի վրա կառուցված է սպանդանոցը)՝ համալրված անհրաժեշտ սարքավորումներով, կարող է դիտարկվել որպես լիզինգի առարկա: Այս դեպքում սպանդանոցի կառուցման նախագիծը և անասնաբուժասանիտարական պահանջները նախապես համաձայնեցվում են ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ:

2. ՀՀ-ում 2019-2024թթ. տավարաբուծության զարգացման ծրագիր	
Նպատակ	ՀՀ-ում աճեցված տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ ԽԵԿ) ձեռքբերում և/կամ ներկրում *(ԽԵԿ՝ երինջներ և 14 - 17 ամսական էգ մատղաշներ (ներկրման դեպքում արտահանվող երկրում կարանտինի կանգնեցնելու, իսկ ՀՀ-ում՝ առուվաճառքի պայմանագրի կնքման դրությամբ))*
Շահառու	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, գյուղատնտեսական կոոպերատիվներ
Վարկի գումար	Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր վարկառու տարեկան կորող է ձեռք բերել առավելագույնը 300 գլուխ տոհմային ԽԵԿ, իսկ տրամադրվող վարկերի ընդհանուր մնացորդը մեկ վարկառուի համար չի կարող գերազանցել **300 մլն ՀՀ դրամը**:
Տարեկան անվանական տոկոսադրույք	**14%,** որից սուբսիդավորումն իրականացվում է այնպիսի չափաքանակով, որպեսզի ՀՀ-ում աճեցված տոհմային ԽԵԿ ձեռք բերելու համար վարկերը տրամադրվեն **2%-ով**, ներկրված ԽԵԿ ձեռք բերելու համար՝ **3%-ով**, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի №1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների տնտեսվարողների կամ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվների դեպքում կսուբսիդավորվի **14%**-ն ամբողջությամբ: ***Բանկի կողմից վարկի տրամադրման հետ կապված այլ վճարներ չեն սահմանվում***
Տարեկան փաստացի տոկոսադրույք	**0 - 9.84%** *Ներառում է նաև վարկը ստանալու համար անհրաժեշտ այլ վճարները՝ գրավի գնահատման, գրավի իրավունքի գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման: Սուբսիդավորման տոկոսադրույքը չի ներառվում փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:*
Ժամկետ	**Մինչև 60 ամիս** *Վարկի մայր գումարի մարման համար կարող է սահմանվել արտոնյալ ժամանակահատված՝ վարկի տրամադրման 1-ին տարվա սկզբում առավելագույնը 12 ամիս:*
Այլ պայմաններ	1. Ծրագրի Շահառու չեն կարող հանդիսանալ Նախարարության կողմից պետական աջակցության և/կամ այլ պետական ծրագրերի շրջանակներում խնդրահարույց պարտավորություններ ունեցող ֆիզիկական, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: 2. Վարկով նախատեսված գումարը անկանխիկ եղանակով՝ փուլ առ փուլ կամ միանվագ, փոխանցվում է վարկառուի համապատասխան հաշվին: 3. Ծրագրի շրջանակներում ձեռք բերված տոհմային ԽԵԿ-ը օտարելու դեպքում ենթակա չէ կրկնակի վարկավորման: 4. Շահառուն ներկայացնում է գրավոր պարտավորագիր՝ ձեռք բերվող Տոհմային ԽԵԿ-երն առնվազն երեք տարի Հայաստանի Հանրապետությունում տավարի նախրի վերարտադրության համար օգտագործելու վերաբերյալ: 5. Բանկի կողմից առաջին մոնիտորինգն իրականացվում է Վարկը տրամադրելուց հետո երկու ամսվա ընթացքում:

3. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսագումարների սուբսիդավորման ծրագիր	
Նպատակ	Սույն ծրագրով տոկոսագումարների սուբսիդավորմամբ վարկերի նպատակները դասակարգվում են ըստ հետևյալ ուղղությունների՝ 1. **պտուղբանջարեղենի գնումներ,** 2. **խաղողի գնումներ,** 3. **կաթի գնումներ,** 4. **սպանդանոցների կողմից գյուղատնտեսական կենդանիների գնումներ,** 5. **շինշիլայի գնումներ**:
Շահառու	Գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ զբաղվող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր, գյուղատնտեսական կոոպերատիվներ
Վարկի գումար	- Վերամշակման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին **պտուղբանջարեղենի մթերումների** (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 3.0 մլրդ ՀՀ դրամը: - Վերամշակման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին **խաղողի մթերումների** (գնումների) նպատակով յուրաքանչյուր տարի կարող է տրամադրվել մինչև 4.0 մլրդ ՀՀ դրամի չափով վարկ: - Սառնարանային պահպանության և արտահանման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին **պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների** (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 3.0 մլրդ ՀՀ դրամը: - Վերամշակման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին **կաթի մթերումների** (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 1.0 մլրդ ՀՀ դրամը: - Սպանդանոցային գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին **գյուղատնտեսական կենդանիների գնումների** նպատակով տրամադրվող վարկերը հաշվարկվում են սպանդանոցի մակերեսով՝ 15 մ^2 մակերեսի համար ոչ ավելի, քան 2.0 մլն ՀՀ դրամ հաշվարկով, իսկ շարժական սպանդանոցի համար՝ ոչ ավելի, քան 5.0 մլն ՀՀ դրամը: - Շինշիլայի մորթու արտահանման գործունություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին **շինշիլայի գնումների** նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 50.0 մլն ՀՀ դրամը: *Միևնույն վարկառուի կողմից վերը նշված նպատակներով մթերումների (գնումների) համար վարկերի տրամադրումը կատարվում է առանձին հայտերի հիման վրա:*
Տարեկան անվանական տոկոսադրույք	**12%,** որից կսուբսիդավորվի - *16.04 - 30.12.2022թ-ը* տրամադրվող վարկերի դեպքում՝ **10 տոկոսային կետը**, - *01.09 - 30.12.2022թ-ը* խաղողի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի դեպքում՝ **11 տոկոսային կետը,** իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի №1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող և նույն վայրերում գյուղատնտեսական հումք մթերող ու վերամշակող տնտեսավարողների դեպքում՝ **12%**-ն ամբողջությամբ: ***Բանկի կողմից վարկի տրամադրման հետ կապված այլ վճարներ չեն սահմանվում***
Տարեկան փաստացի տոկոսադրույք	**0 - 14%** *Ներառում է նաև վարկը ստանալու համար անհրաժեշտ այլ վճարները՝ գրավի գնահատման, գրավի իրավունքի գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման: Սուբսիդավորման տոկոսադրույքը չի ներառվում փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:*
Ժամկետ	*- Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի դեպքում* **մինչև 18 ամիս** *- Խաղողի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի դեպքում* **մինչև 48 ամիս** *Վարկի մայր գումարի մարման համար կարող է սահմանվել արտոնյալ ժամանակահատված՝ վարկը տրամադրելու պահից՝* *- ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի դեպքում՝ մինչև 6 ամիս* *- խաղողի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի դեպքում՝ մինչև 24 ամիս* *Վարկի չսուբսիդավորվող տոկոսների վճարման պարտավորությունը առաջանում է տրամադրման պահից սկսած:*
Այլ պայմաններ	1. Իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը. ✓ պետք է ունենան բարվոք վարկային պատմություն՝ վարկի համար դիմելու ամսաթվին նախորդող 12 ամիսների ընթացքում չպետք է ունենան հանրագումարային 30 օր և ավելի ժամկետանց վարկային պարտավորություններ, ✓ դիմումի ներկայացման օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ չպետք է ունենան չկատարված հարկային պարտավորություններ:

	2. Տրամադրվող վարկի գումարը չպետք է գերազանցի վարկառուի և գյուղացիական տնտեսությունների և/կամ կաթի հավաքմամբ զբաղվող իրավաբանական անձանց, այդ թվում՝ կոոպերատիվների և/կամ անհատ ձեռնարկատերերի (վաճառող) միջև կնքված պայմանագրերում նշված հումքի գնման արժեքը, իսկ հումքի գնման նվազագույն գներով հաշվարկված լինելու դեպքում՝ հումքի գնման ակնկալվող արժեքի 120 տոկոսը, ընդ որում տրամադրվող վարկի չափի հաշվարկում չի ներառվում վարկառուին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող կամ վարկառուի հիմնադիր կամ բաժնետեր հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) կողմից մշակվող հողատարածքների բերքից կամ կովերի կաթից վարկառուի հետ կնքված հումքի գնման պայմանագրերում նշված հումքի արժեքը: 3. Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի գծով տնտեսավարողների մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ***01.06 – 30.12.2022թ-ը*** կտրամադրվի մինչև 50%-ի չափով բյուջետային երաշխիք, բայց ոչ ավելի, քան 2021թ-ին արտահանված արտադրանքի արժեքը: 4. Պտուղբանջարեղենի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերից բացի ***01.05 – 30.12.2022թ-ը*** կարող է տրամադրվել լրացուցիչ վարկ՝ պտուղբանջարեղենային պահածոների տարայավորման համար անհրաժեշտ ապակե տարաներ, կափարիչներ, ասեպտիկ պարկեր և դրանց տարաներ ձեռք բերելու նպատակով:

4. ՀՀ-ում 2019-2023թթ. ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման ծրագիր	
Նպատակ	ՀՀ-ում աճեցված տոհմային մանր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ ՄԵԿ) ձեռքբերում և/կամ ներկրում *(ՄԵԿ՝ մինչև 18 ամսական հղի ոչխարներ և այծեր, 4-16 ամսական էգ և 6-16 ամսական արու մատղաշներ (ներկրման դեպքում արտահանվող երկրում կարանտինի կանգնեցնելու, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ առուվաճառքի պայմանագրի կնքման դրությամբ))*
Շահառու	Ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, գյուղատնտեսական կոոպերատիվներ
Վարկի գումար	**Յուրաքանչյուր մեկ գլուխ տոհմային ՄԵԿ-ի ձեռքբերման արժեք.** Մինչև **450,000 ՀՀ դրամ** (չհաշված տեղափոխման ծախսերը) **Յուրաքանչյուր շահառուի տրամադրվող վարկերի մնացորդների հանրագումար.** Մինչև **900 մլն ՀՀ դրամ** (առավելագույնը 2,000 գլուխ տոհմային ՄԵԿ, այդ թվում՝ 100 գլխից ոչ ավելի տոհմային արու մատղաշ (ոչխարի և այծի՝ 20:1 էգ/արու հարաբերությամբ)) Միայն 2019թ. համար մինչև ցուցանիշների ½-ը
Տարեկան անվանական տոկոսադրույք	**14%,** որից սուբսիդավորում է **12 տոկոսային կետը**, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի №1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների տնտեսվարողներին կամ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվների դեպքում՝ **14%-ն ամբողջությամբ**: ***Բանկի կողմից վարկի տրամադրման հետ կապված այլ վճարներ չեն սահմանվում***
Տարեկան փաստացի տոկոսադրույք	**0 - 8.73%** *Ներառում է նաև վարկը ստանալու համար անհրաժեշտ այլ վճարները՝ գրավի գնահատման, գրավի իրավունքի գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման: Սուբսիդավորման տոկոսադրույքը չի ներառվում փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:*
Ժամկետ	**Մինչև 48 ամիս** *Վարկի մայր գումարի մարման համար կարող է սահմանվել արտոնյալ ժամանակահատված՝ առավելագույնը 12 ամիս:*
Այլ պայմաններ	1. Ծրագրի Շահառու չեն կարող հանդիսանալ Նախարարության կողմից պետական աջակցության և/կամ այլ պետական ծրագրերի շրջանակներում խնդրահարույց պարտավորություններ ունեցող ֆիզիկական, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: 2. Վարկով նախատեսված գումարը անկանխիկ եղանակով՝ փուլ առ փուլ կամ միանվագ, փոխանցվում է վարկառուի համապատասխան հաշվին: 3. Ծրագրի շրջանակներում ձեռք բերված տոհմային ՄԵԿ-ը օտարելու դեպքում ենթակա չէ կրկնակի վարկավորման: 4. Վարկառուն ներկայացնում է գրավոր պարտավորագիր՝ ձեռք բերվող Տոհմային ՄԵԿ-երն առնվազն երեք տարի Հայաստանի Հանրապետությունում ոչխարի և այծի հոտի վերարտադրության համար օգտագործելու և դրանց պահպանվածության, պտղատվության և ըստ սեռային կազմի սերնդի գլխաքանակի մասին ամենամյա հաշվետվություն (մինչև հաջորդ տարվա հունվարի 15-ը) տրամադրելու վերաբերյալ: 5. Բանկի կողմից առաջին մոնիտորինգն իրականացվում է Վարկը տրամադրելուց հետո երկու ամսվա ընթացքում:

5. ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման 2021-2023թթ. ծրագիր

Նպատակ	Ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող խաղողի, ինտենսիվ պտղատու այգիների, հատապտղանոցների հիմնում, ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակում, ինչպես նաև ոռոգման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդնում: - *Ծրագիրն իրագործվում է երկու բաղադրիչով՝* 1. վարկերի տոկոսագումարի մասնակի սուբսիդավորում, 2. ծախսերի մասնակի փոխհատուցում: - *Յուրաքանչյուր շահառու նույն հողամասի նույն աշխատանքների իրականացման նպատակով կարող է օգտվել միայն մեկ բաղադրիչից:* - Շահառուի հայեցողությամբ տոկոսագումարների սուբսիդավորմամբ վարկերը տրամադրվում են հետևյալ նպատակներով՝ 1. 0.5 (յուրաքանչյուր պտղատեսակի համար) - 200 հա այգեհիմնման (ներառյալ առաջին տարվա խնամքի ծախսերը). 2. 0.5 - 100 հա տարածքի համար ոռոգման արդիական համակարգերի և/կամ ջրավազանների կառուցման կամ ընդլայնման, և/կամ կարկտապաշտպան ցանցերի ներդրման. 3. 1.0 - 30 հա ծնեբեկի, պրասասոխի, ռուկոլայի, բրյուսելյան և պեկինյան կաղամբների, կոլրաբիի, գանգրակաղամբի (կալե), ցուկինիի (դեղին կամ մուգ կանաչ), պատիսոնի և քաղցր եգիպտացորենի մշակության.
Շահառու	ՀՀ գյուղատնտեսությունում տնտեսվարող ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, գյուղատնտեսական կոոպերատիվներ
Յուրաքանչյուր Շահառուի 1 հա-ի գնահատված ընդհանուր ծախսերի առավելագույն սահմանաչափ	✓ **Այգեհիմնման աշխատանքների համար՝** *ներառյալ ոռոգման արդիական համակարգերի (բացի կաթիլային ոռոգման համակարգերից այլ համակարգերի ներդրման դեպքում՝ ծախսերը կգնահատվեն ոչ ավելի, քան կաթիլային ոռոգման համակարգի ներդրման ծախսի սահմանված առավելագույն սահմանաչափը) և/կամ կարկտապաշտպան ցանցերի ներդրման, և/կամ ջրավազանի կառուցման կամ ընդլայնման, 1-ին տարվա խնամքի ծախսերը.* 1. ինտենսիվ պտղատու այգի՝ հնդավորներ, կորիզավորներ և չոր մերձարևադարձայիններ՝ **30.3 մլն ՀՀ դրամ**, կարկտապաշտպան ցանցով՝ **40.5 մլն ՀՀ դրամ**, 2. ինտենսիվ պտղատու այգի՝ ընկուզավորներ՝ **12.6 մլն ՀՀ դրամ**, կարկտապաշտպան ցանցով՝ **24.7 մլն ՀՀ դրամ**, 3. խաղողի այգի՝ **18.5 մլն ՀՀ դրամ**, կարկտապաշտպան ցանցով՝ **21.3 մլն ՀՀ դրամ** (սեղանի խաղողի դեպքում՝ **27.9 մլն ՀՀ դրամ**), 4. հատապտղանոց՝ **19.3 մլն ՀՀ դրամ**, կարկտապաշտպան ցանցով՝ **29.4 մլն ՀՀ դրամ**: *Առանց ջրավազան կառուցելու կամ ընդլայնելու այգեհիմնման դեպքում՝ ծրագրով նախատեսված ջրավազանի կառուցման կամ ընդլայնման ծախսը կհանվի ընդամենը ծախսերից:* ✓ **Առանց այգեհիմնման կարկտապաշտպան ցնացի ներդրման համար՝ 12.1 մլն ՀՀ դրամ:** ✓ **Առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգի ներդրման համար.** 1. կաթիլային համակարգի դեպքում՝ **2.5 մլն ՀՀ դրամ**, 2. անձրևացման համակարգերի դեպքում՝ **2.6 մլն ՀՀ դրամ**, 3. ջրավազանների կառուցման կամ ընդլայնման դեպքում՝ **2.0 մլն ՀՀ դրամ**: ✓ **Ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակության համար.** 1. ծնեբեկ՝ **7.2 մլն ՀՀ դրամ**, 2. պրասասոխ՝ **3.9 մլն ՀՀ դրամ**, 3. ռուկոլա՝ **3.8 մլն ՀՀ դրամ**, 4. բրյուսելյան կաղամբ՝ **4.3 մլն ՀՀ դրամ**, 5. պեկինյան կաղամբ՝ **4.2 մլն ՀՀ դրամ**, 6. կոլրաբի՝ **4.8 մլն ՀՀ դրամ**, 7. գանգրակաղամբ՝ **4.5 մլն ՀՀ դրամ**, 8. ցուկինի և պատիսոն՝ **2.9 մլն ՀՀ դրամ**, 9. քաղցր եգիպտացորեն՝ **2.2 մլն ՀՀ դրամ**: ✓ Բացի վերոնշյալ ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերից, շահառուն նախարարության համաձայնությամբ կարող է մշակել նաև **այլ ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսեր**, որոնց դեպքում 1 հա-ի ընդհանուր ծախսի առավելագույն սահմանաչափը գնահատվում է **4.2 մլն ՀՀ դրամ**:
Տարեկան տոկոսադրույք	Վարկը տրամադրվում է տարեկան **մինչև 14%** փաստացի տոկոսադրույքով, որից սուբսիդավորումն իրականացվում է այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկը շահառուներին տրամադրվի **2%**

	տոկոսադրույքով, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի №1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների տնտեսվարողներին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիներին, գյուղատնտեսությունում տնտեսվարող երիտասարդներին (վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահին 18 - 35 տարեկանը չլրացած ֆիզիկական անձանց), նաև գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում (ընդգրկված 2007 թվականի ապրիլի 2–ի ՀՀ տարածքային կառավարման նախարարի N 18-Ա և ՀՀ գյուղատնտեսության նախարարի N 77-Ա համատեղ հրամանով հաստատված «Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաներն ու ռեժիմները ՀՀ-ի ոռոգելի հողատարածքների համար» ձեռնարկում) այգեհիմնման և/կամ ոռոգման արդիական համակարգեր ներդրողներին՝ **0% տոկոսադրույքով**: ***Բանկի կողմից վարկի տրամադրման հետ կապված այլ վճարներ չեն սահմանվում*** *Տարեկան **փաստացի տոկոսադրույքը** ներառում է նաև վարկը ստանալու համար անհրաժեշտ այլ վճարները՝ գրավի գնահատման, գրավի իրավունքի գրանցման, միասնական տեղեկանքի և նոտարական վավերացման: Սուբսիդավորման տոկոսադրույքը չի ներառվում փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:*
Ժամկետ	- Այգեհիմնում կատարելու դեպքում՝ **8 տարի**՝ մինչև 5 տարի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատվածով: - Առանց այգեհիմնման կարկտապաշտպան համակարգեր ներդնելու դեպքում՝ **7 տարի**՝ մինչև 3 տարի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատվածով: - Առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգեր (կաթիլային կամ անձրևացման) ներդնելու, ինչպես նաև ջրավազանների կառուցման կամ ընդլայնման դեպքում՝ **4 տարի**՝ մինչև 1 տարի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատվածով: - Ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակության դեպքում՝ **2 տարի** (ծնեբեկի դեպքում՝ **5 տարի**)՝ մինչև 1 տարի (ծնեբեկի դեպքում՝ մինչև 4 տարի) մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատվածով: *Եթե շահառուին միևնույն նախագծի համար վարկը տրամադրվում է փուլերով կամ մեկից ավելի վարկային պայմանագրերով (մասնաբաժիններով), ապա յուրաքանչյուր հաջորդ վարկը համարվում է առաջին տրված վարկի շարունակությունը, և վարկի մարման ու մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատվածները պետք է համապատասխանեն առաջին տրված վարկի ժամկետներին:* *Վարկի մայր գումարի և տոկոսների մարման գործընթացն իրականացվում է ամսական վճարման եղանակով:*
Այլ պայմաններ	1. Վարկի տոկոսագումարների մասնակի սուբսիդավորման դեպքում յուրաքանչյուր շահառուի համար տարածքների հանրագումարը չի կարող գերազանցել. ✓ այգեհիմնում՝ 200 հա-ը, ✓ ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակություն՝ 30 հա-ը, ✓ առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդնում՝ 100 հա-ը (նաև ջրավազանների կառուցման կամ ընդլայնման համար), ✓ առանց այգեհիմնման կարկտապաշտպան ցանցերի ներդնում՝ 100 հա-ը: 2. Ծրագիրը կարող է իրականացվել նաև կապալառու կազմակերպության միջոցով՝ որպես կապալառու կարող են հանդես գալ այն այգու ամբողջական հիմնումն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք ընդգրկված են նախարարության կողմից հրապարակված ցանկում: 3. Ծրագրի շրջանակում նույն հողամասի նույն աշխատանքների իրականացման համար շահառուները չեն կարող օգտվել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության այլ ծրագրերից: 4. Ծրագրի այգեհիմնման բաղադրիչով մասնակցության նախապայման է համարվում այգեհիմնման ժամանակահատվածում և հաջորդող 3 տարիների համար՝ բարձրագույն ագրոնոմիական կրթություն և համապատասխան ոլորտի աշխատանքային փորձ, կամ գործունեության տվյալ տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող միջազգային կամ այլ փաստաթղթեր ունեցող խորհրդատվական ծառայություն մատուցողի հետ կնքված պայմանագրի առկայությունը, նաև գրանցամատյանի վարումը (հրապարակվում է նախարարության կայքում), որտեղ գրանցվում է խորհրդատուի կողմից առաջարկվող և շահառուի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը: 5. Ծրագրի շրջանակում տրամադրված պետական օժանդակության միջոցով չի նախատեսվում այգեհիմնման, մշակաբույսերի մշակման և հետագա խնամքի նպատակով գյուղատնտեսական տեխնիկայի և ինքնագնաց միջոցների ձեռքբերումը, ինչպես նաև վերոնշյալ խորհրդատվական ծառայության համար վճարումների կատարումը: 6. Ծրագրի շրջանակում այգեհիմնման նպատակով թույլատրվում է այգեհիմնման տարածքի չափով հողի ձեռքբերում, եթե չեն գերազանցվում գնահատված ծախսերի առավելագույն սահմանաչափերը: 7. Եթե անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքն ընդհանուր համատեղ սեփականություն է կամ վարձակալություն, ապա ներկայացվում է նաև նոտարական կարգով վավերացված՝ սեփականատիրոջ կամ համասեփականատերերի ծրագրին մասնակցելու համաձայնությունը, ընդ որում, վարձակալության ժամկետը պետք է դիմումի ներկայացման օրվանից այգեհիմնման դեպքում առնվազն կազմի ՝ 20 տարի, ոռոգման արդիական համակարգի ներդրման դեպքում՝ 4 տարի, կարկտապաշտպան ցանցի դեպքում՝ 7 տարի, իսկ ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի դեպքում՝ 2 տարի:

8. Ծախսերի նախահաշիվների և ծախսերը հիմնավորող փաստաթղթերից բացի շահառուն պետք է ներկայացնի նաև
   - ✓ արտերկրից ձեռք բերված տնկանյութի, սածիլի կամ սերմի ծագումն ու որակը հավաստող փաստաթղթերը (հավաստագիր) և/կամ տուփը, և/կամ պիտակը, ներկրումը հավաստող փաստաթղթերը, բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ակտը,
   - ✓ տեղական արտադրության տնկանյութի, սածիլի կամ սերմերի ծագումն ու որակը հավաստող փաստաթղթերը (հավաստագիր), բուսասանիտարական անձնագիրը:
9. Այգեհիմնան նպատակով անհրաժեշտ է ներկայացնել հողի ագրոքիմիական բաղադրության լաբորատոր փորձաքննության եզրակացություն (առավելագույնը 6 ամիս վաղեմության), ինչպես նաև համայնքի (վարչական շրջանի) ղեկավարի կողմից հաստատված տեղեկատվություն՝ այգեհիմնմանը նախորդող երեք տարիների ընթացքում տվյալ տարածքում մշակված մշակաբույսերի վերաբերյալ:
10. Վարկի տրամադրումից հետո 1 օրացուցային տարվա (ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակության նպատակով տրամադրված վարկի դեպքում՝ 2 ամսվա) ընթացքում Բանկի կողմից իրականացվում է նպատակային և ֆինանսական մոնիտորինգ:
11. Ծրագրի շրջանակում գործող այլ պայմաններին և պահանջներին կարող եք ծանոթանալ՝ այցելելով կամ զանգահարելով Բանկ:

Հաճախորդի կողմից իրականացվող վճարների ցանկ

Գրավի առարկայի գնահատում	Անշարժ գույքի դեպքում՝ սկսած 18,000 ՀՀ դրամից *(կախված տեսակից և մակերեսից)* Շարժական գույքի դեպքում՝ սկսած 10,000 ՀՀ դրամից *(կախված տեսակից)*
Միասնական տեղեկանք	Անշարժ գույքի դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ Շարժական գույքի դեպքում՝ 0
Գրավի իրավունքի գրանցում	Անշարժ գույքի դեպքում՝ 27,000 ՀՀ դրամ Շարժական գույքի դեպքում՝ 2,000 ՀՀ դրամ
Նոտարական վավերացում	20,000 ՀՀ դրամ
Գրավադրվող գույքի ապահովագրություն	- Անշարժ գույք՝ 0.12 – 0.16 (պահանջի առկայության դեպքում) - Մարդատար մեքենա (Կասկո)՝ 2.5% (որպես տաքսի օգտագործվող՝ 6%) - Հատուկ նշանակության շարժական գույք՝ ըստ ապահովագրական ընկերության գնանշման

Լիզինգի/վարկի տոկոսագումարը հաշվարկվում է անվանական տոկոսադրույքի հիման վրա, որը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման ու սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ *հասցեում*:

Տույժեր և տուգանքներ

Պայմանագրով նախատեսված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում լիզինգառուն/վարկառուն Բանկին վճարում է տույժ՝ ժամկետանց գումարի 0.13%-ի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ տույժ/տուգանք, տոկոսագումար, մայր գումար:

Լիզինգի/վարկի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

Մայր գումարի և տոկոսագումարների մարման հաճախականություն և եղանակ

1. **«Անուիտետային»** (հավասարաչափ ամսական մարում), որում մայր գումարը և կուտակված տոկոսները ներառված են փոփոխական մասերով:
2. **«Զսպանակաձև»** (նվազող ամսական մարում), որում մայր գումարը ներառված է հավասար չափով, իսկ կուտակված տոկոսները՝ փոփոխական:
3. **«Ճկուն»**, որի դեպքում լիզինգի/վարկի մայր գումարի մարումներն իրականացվում են գործունեության առանձնահատկություններից ելնելով, իսկ տոկոսագումարները՝ ամսական:

Լիզինգի/վարկի ապահովում

Շարժական և անշարժ գույքի, ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած նյութական և ոչ նյութական արժեքների գրավ, անհրաժեշտության դեպքում՝ նաև երաշխավորություն:

Վարկ/գրավ հարաբերակցություն

Մինչև գրավի գնահատված իրացվելի արժեքի 70%՝ կախված գրավադրվող գույքի տեսակից և ֆինանսավորման առանձնահատկություններից:

Ոսկյա իրերի գրավադրման դեպքում ֆինանսավորումն իրականացվում է մինչև գնահատված արժեքի 100%-ը:

Երաշխավորին ներկայացվող պահանջներ

Երաշխավորը՝

- պետք է ունենա կայուն հիմնավորված եկամուտ կամ սեփականության/համասեփականության իրավունքով պատկանող անշարժ և/կամ պետական գրանցման ենթակա շարժական գույք,
- լիզինգի/վարկի տրամադրման պահին կարող է ունենալ առավելագույնը 3 գործող երաշխավորություն՝ տրամադրված այլ անձանց պարտավորությունների դիմաց, որոնց պարտավորությունները ժամկետանց չեն,
- լիզինգի/վարկի տրամադրման պահին չպետք է ունենա խնդրահարույց, իսկ վերջին 12 ամիսների ընթացքում 30 և ավելի օր ժամկետանց պարտավորություններ,

Երաշխավորության վերաբերյալ բացատրական տեղեկատվություն

Եթե լիզինգառուն/վարկառուն չկատարի իր պարտավորությունները, ապա երաշխավորն է վճարելու նրա փոխարեն, վատանալու է նաև երաշխավորի վարկային պատմությունը և հնարավոր է՝ երաշխավորը զրկվի իր սեփական գույքից:

Կոնվերս Բանկը՝

- երաշխավորին կտրամադրի լիզինգի/վարկային և երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ,
- հաղորդակցումը կիրականացնի երաշխավորի կողմից ընտրված եղանակով,
- առնվազն 7 օր առաջ կծանուցի պայմանագրի պայմանների փոփոխության մասին,
- 1 օր առաջ կհիշեցնի առկա պարտավորության վերաբերյալ,
- լիզինգի/վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո այդ մասին կտեղեկացնի երաշխավորին:

Երաշխավորն իրավունք ունի՝

- ցանկացած ժամանակ Բանկից պահանջել տեղեկատվություն լիզինգի/վարկի մնացորդի չափի մասին,
- լիզինգառուից/վարկառուից հետ ստանալու իր կողմից լիզինգի/վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև լիզինգառուի/վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Գրավի գնահատում

Գրավադրվող անշարժ և շարժական գույքը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող ընկերություններից որևէ մեկի կողմից: Գնահատող ընկերության ընտրությունը կատարվում է հաճախորդի կողմից: Գույքի շուկայական/իրացվելի արժեքի գնահատման հաշվետվությունը վավեր է տրման օրվանից 2 ամսվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում (օրինակ՝ շուկայում գների փոփոխություն) կարող է պահանջվել լրացուցիչ գնահատում:

Ոսկու գրավադրման դեպքում գնահատումն իրականացվում է Բանկի աշխատակցի կողմից:

Առաջնային շուկայից ավտոմեքենայի, շինարարական և գյուղատնտեսական տեխնիկայի ու այլ սարքավորումների ձեռքբերման դեպքում որպես գնահատված շուկայական արժեք կարող է հիմք ընդունվել ձեռքբերման պայմանագրով կամ հաշիվ-ապրանքագրով սահմանված գումարը:

Գնահատող ընկերությունների ցանկ

Գնահատող ընկերություն	Հասցե	Հեռախոսահամար
«Ամինտաս Գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Արցախի պող., 23/6 շ., «Տուն Դեպո» համալիր	(010) 432 276, (094) 432 276, (096) 432 276
«Ար Վի Էմ Քոնսալտ» ՍՊԸ	ք. Երևան, Նալբանդյան փող., 48/1 շ., 2-րդ հարկ	(010) 546 490, (098) 944 449, (077) 944 449, (093) 944 449
«Բիլդափ» ՍՊԸ	ք. Երևան, Զաքյան փող., 5 շ., 1 գրասենյակ	(010) 547 160, (091) 177 300
«Վի Էմ - Ար Փի» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց փկղ., 8/3 շ., 209 սենյակ	(010) 588 797, (043) 588 797

Գրավադրվող գույքի ապահովագրություն

Բանկը կարող է պահանջել գրավադրվող գույքի ապահովագրություն՝ ելնելով ֆինանսավորման նպատակից, գործարքից կամ գրավադրվող գույքի նկարագրից:

Ավտոտրանսպորտային միջոցների գրավադրման դեպքում կիրառվում է Կասկո ապահովագրություն:

Ապահովագրությունն իրականացվում է գնահատված շուկայական արժեքի չափով՝ ֆինանսավորման ամբողջ ժամանակահատվածի համար (եթե Բանկի որոշմամբ այլ բան նախատեսված չէ), Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերության կողմից:

Ապահովագրական ընկերությունների ցանկ

Ապահովագրական ընկերություն	Հասցե	Հեռախոսահամար
«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ	ք. Երևան, Հանրապետության փող., 51, 53, տարածքներ 47, 48, 50	(010) 592 121
«ՌԵԳՈ» ԱՓԲԸ	ք. Երևան, Կոմիտասի պող., 62 շ.	(060) 275 757, (098) 560 797
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	ք. Երևան, Հյուսիսային պող. 1	(010) 591 010
«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	ՀՀ, 0033, ք. Երևան, Ավետ Ավետիսյան 116/1 և 116/5 տարածք	(060) 500 060, (010) 543 594

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է՝ հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:

Քաղվածքների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրում (ներառյալ ԱԱՀ)

- **Քաղվածքի տրամադրում ֆիզիկական անձանց**
  - ✓ ՀՀ օրենսդրությամբ և/կամ պայմանագրով սահմանված պարբերականությամբ հաճախորդի նախընտրած եղանակով՝ 0,
  - ✓ ՀՀ օրենսդրությամբ և/կամ պայմանագրով սահմանված պարբերականությամբ էլեկտրոնային եղանակով տրամադրված քաղվածքների՝ հաճախորդի ցանկությամբ հավելյալ տրամադրում վերջինիս նախընտրելի եղանակով և նախընտրելի ժամանակահատվածի համար (յուրաքանչյուր ժամանակահատվածի համար մեկ անգամ)՝ 0
  - ✓ Քաղվածքի տրամադրում նախորդ կետերում սահմանված պարբերականությունից բացի[1]՝
  - մինչև 3 տարի վաղեմության՝ 1,000 ՀՀ դրամ
  - 3 տարի և ավելի վաղեմության (Բանկում պահպանված լինելու դեպքում)՝ 3,000 ՀՀ դրամ
- **Քաղվածքի տրամադրում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին**
  - ✓ *մեկ անգամ*՝ 0 (անկախ պարբերականությունից)
  - ✓ *Հավելյալ քաղվածքի (կրկնօրինակի) տրամադրում*[1]
  - Մինչև 1 ամիս վաղեմության ՝ 1,800 ՀՀ դրամ
  - Երկու ամսից մինչև 1 տարի վաղեմության ՝ 3,000 ՀՀ դրամ
  - Մեկ տարուց մինչև 3 տարի վաղեմության՝ 12,000 ՀՀ դրամ
  - 3 տարի և ավելի վաղեմության (Բանկում պահպանված լինելու դեպքում)՝ 24,000 ՀՀ դրամ
- **Հաշվի/հաշիվների մնացորդի և/կամ շրջանառության մասին տեղեկանք՝ Բանկի ինտերնետային կայքի միջոցով ներկայացված հայտի հիման վրա (միայն ֆիզիկական անձանց դեպքում)՝** 3,000 ՀՀ դրամ
- **Տարբեր հաստատություններ ներկայացնելու համար տեղեկանք**[1]
  - Մեկ ամսվա ընթացքում բացված հաշիվների դեպքում[2]՝ 5,000 ՀՀ դրամ
  - Ավելի վաղ բացված հաշիվների դեպքում՝ 3,000 ՀՀ դրամ
- **Տեղեկանքներ/գրություններ**
  - ✓ *Կատարված գործարքների վերաբերյալ*
  - Մինչև մեկ ամսվա վաղեմություն ունեցող գործարքների համար՝ 3,000 ՀՀ դրամ
  - Մեկ ամսից ավելի վաղեմություն ունեցող գործարքների համար՝ 5,000 ՀՀ դրամ
  - ✓ *Բանկում գրավադրված գույքի՝ հաջորդող գրավի/օտարման համաձայնության վերաբերյալ գրություն*՝ 6,000 ՀՀ դրամ՝ գրավադրված յուրաքանչյուր գույքի համար
- **Գործարքի կատարման հիմքեր, և այլ փաստաթղթերի պատճեններ (յուրաքանչյուր փաստաթղթի համար)**
  - Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող՝ 1,800 ՀՀ դրամ

- Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող՝ 3,000 ՀՀ դրամ
- Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող՝ 12,000 ՀՀ դրամ

Այլ ծառայությունների սակագներ (ներառյալ ԱԱՀ)

- **Քաղվածքների կամ այլ փաստաթղթերի փոստային առաքում**
  - ✓ *Ներհանրապետական և ԱՀ*
  - Ֆիզիկական անձանց դեպքում՝ 0
  - Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ 500 ՀՀ դրամ
  - ✓ *Միջազգային*
  - Օրենքով և պայմանագրով սահմանված լինելու դեպքում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին
  - Այլ դեպքերում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին + 1,500 ՀՀ դրամ
- **Քաղվածքների կամ այլ փաստաթղթերի՝ Պատվիրակված առաքման փոստային ծառայության միջոցով առաքում**
  - Ներհանրապետական և ԱՀ՝ 3,000 ՀՀ դրամ
  - Միջազգային՝ Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին + 5,000 ՀՀ դրամ
- **Գրավադրված անշարժ գույքի հասցեում անձի հաշվառման նպատակով Բանկի համաձայնության տրամադրում (անկախ գրանցվողների քանակից)՝** 3,000 ՀՀ դրամ
- **Բանկում գրավադրված անշարժ գույքի սեփականության փաստաթղթերի փոփոխության համար համաձայնության տրամադրում[3]՝** 0.5%, նվազագույնը՝ 12,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 60,000 ՀՀ դրամ
- **Գրավադրված անշարժ գույքը վարձակալության հանձնելու թույլտվության տրամադրում՝** 12,000 ՀՀ դրամ
- **Գրավադրված ավտոմեքենայի հաշվառման վկայագրում փոփոխություն կատարելու համաձայնության տրամադրում՝** 12,000 ՀՀ դրամ
- **Գրավադրված մեքենան վարձակալության հանձնելու թույլտվության տրամադրում՝** 8,000 ՀՀ դրամ
- **Գրավատուի կամ վարկառուի դիմումի հիման վրա գրավադրված գույքի մասնակի ազատում (բացառությամբ դրամական միջոցների և առարկայազուրկ մետաղական հաշիվների գրավադրման)՝** 20,000 ՀՀ դրամ (**ըստ յուրաքանչյուր գույքի**)
- **Վարկի պայմանների վերանայում[4]՝** 0.5%, նվազագույնը՝ 6,000 ՀՀ դրամ

[1]Նույն հաճախորդին տեղեկանքի և քաղվածքի միաժամանակյա տրամադրման և տեղեկանքի դիմաց գանձում նախատեսված լինելու դեպքում գանձումը կատարվում է միայն տեղեկանքի դիմաց:
[2]Մեկից ավելի գործող հաշիվ ունենալու պարագայում դիտարկվում է ավելի վաղ բացված հաշվի բացման ամսաթիվը՝ անկախ տեղեկանքում ներառվելու փաստից:
[3] Սակագնի հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով գրավի սկզբնական գնահատված արժեքը:
[4] Սակագնի հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով տրամադրված վարկի գումարը: Նախատեսված սակագները գանձվում են հաճախորդի կողմից վարկի պայմանների վերանայման դիմումը ներկայացնելու պահին:

Լիզինգի/վարկերի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- Վարկային հայտ-հարցաթերթիկ
- Հարցումներ կատարելու համաձայնություններ
- Իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթեր, անձը հաստատող փաստաթուղթ, հանրային ծառայությունների համարանիշ կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (չի պահանջվում, եթե ներկայացվում է նույնականացման քարտ)
- Բաժնետիրական ընկերության դեպքում՝ տեղեկանք դեպոզիտարիայից բաժնետերերի մասին:
- Որպես գրավ առաջարկվող միջոցների սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ և ձեռքբերման հիմքեր
- Վերջին մեկ տարվա հարկային հաշվետվություններ (եթե առկա է)
- Տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ
- Գործունեության ծավալման վայրի սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր, կամ հաճախորդի՝ գործունեության վայրի նկատմամբ իրավունքը հաստատող այլ հիմք (օրինակ՝ տեղեկանք գյուղապետարանից)
- Առաջարկվող գրավի գնահատման (վերագնահատման) նախնական և հիմնական (լիզինգի/վարկի հաստատումից հետո) հաշվետվություն կամ արժեքի որոշման հիմք

- Ընդհանուր ժողովի կամ միակ մասնակցի որոշման արձանագրության քաղվածք՝ ֆինանսավորում ստանալու, գույքի գրավադրման, երաշխավորության տրամադրման վերաբերյալ
- Գրավի ապահովագրության վկայագրեր (ապահովագրության պահանջի դեպքում՝ լիզինգի/վարկի հաստատումից հետո)
- Տեղեկանք սահմանափակումների վերաբերյալ (լիզինգի/վարկի հաստատումից հետո)
- Տեղեկանք գյուղապետարանից/թաղապետարանից
- Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

Ուշադրություն
ՀՀ ԷՆ «ԳՏՏԶ ԾԻԳ» ՊՀ-ի ԳՖԿ-ն իրավասու է իրականացնել լիզինգի/վարկի նպատակային օգտագործման համապատասխանության ստուգումներ սուբսիդավորվող տոկոսագումարի վճարման ողջ ժամանակահատվածում:
Լիզինգի/վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը կարող է դադարեցվել հետևյալ դեպքերում՝ *- տվյալ ֆինանսավորման մասով նախորդ 12 ամիսների ընթացքում հանրագումարային վաթսուն օրվանից ավելի ուշացման կամ «ստանդարտ»-ից ավելի խիստ դասով դասակարգված պարտավորության առկայության,* *- ծրագրով սահմանված պահանջների չպահպանման, ֆինանսավորման ոչ նպատակային օգտագործման կամ պայմանների խախտման հայտնաբերման,* *- շահառուի կողմից կեղծ տեղեկատվության տրամադրման,* *- պայմանագրի վաղաժամկետ լուծման:*
Լիզինգի/վարկի ոչ նպատակային, ծրագրի պայմաններին ոչ համապատասխան օգտագործման կամ ներկայացված կեղծ տեղեկատվության ի հայտ գալու դեպքում՝ մինչ այդ պահը տրամադրված սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման, ինչպես նաև Բանկն իրավունք է ունենում ֆինանսավորումը հանել ծրագրից և միակողմանիորեն փոփոխել տոկոսադրույքը՝ կիրառելով Բանկում գործող գյուղատնտեսական կամ բիզնես ֆինանսավորումների համար սահմանված ավելի բարձր տոկոսադրույք:
Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ տվյալները կտրամադրվեն վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Վատ վարկային պատմություն ունենալը հետագայում կարող է խոչընդոտել վարկի ստացման հարցում: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ստանալ Ձեր վարկային պատմության զեկույցը:
Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե Դուք ժամանակին չկատարեք Ձեր տոկոսագումարների և լիզինգի/վարկի գումարի մարումները:
Գրավի իրացումից ստացված գումարը Ձեր լիզինգի/վարկային պարտավորությունները մարելու համար բավարար չլինելու դեպքում, դրանք կարող են մարվել Ձեր և/կամ երաշխավորի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Բանկը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին:
Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ կառավարության հետ կնքած համաձայնագրի պայմաններին համապատասխան, Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
Բանկն իրավասու է փոփոխել և լրացնել մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագները՝ պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով այդ մասին հաճախորդներին՝ սեփական ինտերնետային էջում (www.conversebank.am) հաղորդագրություն հրապարակելով, Բանկի տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով, փոստով ծանուցումն առաքելու միջոցով և հաճախորդի կողմից ընտրված Բանկի կողմից առաջարկվող այլ եղանակներով տրամադրելու միջոցով, որը համարվում է Հաճախորդի պատշաճ իրազեկում:
Մինչև 5 մլն ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) գումարի չափով լիզինգ/վարկ ստանալու համար դիմելիս Կոնվերս Բանկը ֆիզիկական անձ հաճախորդներին կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք Վարկի անհատական պայմանները:

Լիզինգը/վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործոնները

Բանկը հակված է տրամադրել լիզինգը/վարկը, եթե

- Հայտատուն համապատասխանում է տվյալ լիզինգի/վարկի տրամադրման պայմաններին և սահմանափակող դրույթներին,
- Հայտատուն Բանկի պահանջով իր լիզինգի/վարկային պարտավորությունն ապահովում է գրավով և/կամ երաշխավորությամբ,
- Հայտատուն գնահատման արդյունքում ճանաչվում է վարկունակ,
- Հայտատուի ներկայացրած փաստաթղթերն արժանահավատ են և ներառում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները,
- Հայտատուի վարկային պատմությունը դրական է կամ բացակայում է:

Հայտատուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ պահանջներին չհամապատասխանելը, կարող է հանգեցնել լիզինգի/վարկի տրամադրման մերժմանը:

Լիզինգի/վարկի տրամադրման որոշման մասին տեղեկացնելու և լիզինգը/վարկը տրամադրելու ժամկետները

- ✓ Որոշման կայացումը տևում է անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի և վերլուծության ապահովումից հետո առավելագույնը 10 բանկային օր:
- ✓ Հաճախորդը տեղեկացվում է մեկօրյա ժամկետում:
- ✓ Վարկային/լիզինգի պայմանագրերը կնքվում են Հաճախորդի կողմից փաստաթղթերի ամբողջական փաթեթը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 3 - 5 բանկային օրվա ընթացքում:
- ✓ Վարկի/լիզինգի փաստացի տրամադրումը հաճախորդին կատարվում է համապատասխան պետական մարմիններից գրավի իրավունքի վկայականը ստանալուն պես:

Լիզինգի/վարկի ձևակերպման վայրը և տրամադրման եղանակը

Լիզինգը/վարկը տրամադրվում է Բանկի Գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում:
Լիզինգի/վարկի գումարը փոխանցվում է կապալառուի կամ Շահառուի համապատասխան հաշվին:

Ձեր ֆինանսական տեղեկատուն

«Ձեր ֆինանսական տեղեկատուն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է՝ https://www.fininfo.am/gyuxatntesakan-varker:

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15,
«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
Էլ. փոստ՝ info@fsm.am
Հեռախոս՝ (+37460) 70-11-11, Ֆաքս՝ (+37410) 58-24-21

Կապ Բանկի հետ

Մանրամասների և հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի https://www.conversebank.am ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
  WhatsApp՝ +374 95 511211
  Skype՝ conversebank-callcenter